ԹՂԹԱԿՑՈՒԹԻՒՆ ԻՐԱՆԻՑ

«ԵՀՈՎԱՅԻ՞ ՎԿԱՆԵՐ», ԹԷ՞ ՍՏՈՒԹԵԱՆ ՎԿԱՆԵՐ

Վերջին տասնամեակների ընթացքին յայտնուած մեծ ու փոքր աղանդների շարքին է «Եհովայի Վկաներ» կոչուած չարալից եւ վնասակար աղանդը, որի հիմնադիրներն ու հետնորդները Քրիստոսի ճշմարիտ հաւատը ուրացածներ են:

Իրենց բերանացի ու գրաւոր բոլոր արտայայտութիւնների մէջ Եհովայի Վկաները սիրում են իրենց ներկայացնել իբրեւ միակ ճշմարիտ հաւատացեալներ եւ Եհովայի միակ հաւատացեալներ, «ընտրեալներ», Աստծոյ անունը (Եհովա) կրող միակ ճշմարիտ «Աստուծոյ ժողովուրդ», կարծէք թէ մենք՝ աշխարհի բոլոր քրիստոնեաներս, լինէինք «Սատանայի ժողովուրդ»:

Այս պղծաշուրթ հայհոյիչները որպէս թէ Աստուծոյ դատն են պաշտպանում: Նրանք չեն ընդունում Երրորդութեան վարդապետութիւնը, Եկեղեցւոյ Խորհուրդները: Մերժում են Քրիստոսի կատարեալ մարդ եւ միաժամանակ կատարեալ Աստուած լինելու քրիստոնէական մեր դաւանանքը, չեն ընդունում Նոր Կտակարանում Քրիստոսի աստուածային էութեան եւ առաքելութեան մասին գոյութիւն ունեցող բացայայտ վկայութիւնները:

Եհովայի Վկաների քարոզած հաւատքը չի կարելի քրիստոնէական հաւատք անուանել, որովհետեւ իրենց ուսուցումները չեն հիմնուած Քրիստոսի մասին Նոր Կտակարանում գոյութիւն ունեցող բացայայտ վկայութիւնների, ինչպէս նաեւ տիեզերական ժողովներով եւ մեր եկեղեցական հայրերի կողմից հաստատուած քրիստոնէական հաւատալիքների վրայ:

Նրանք իրենց ցանկացած աղանդաւորական գաղափարները քարոզելու համար չարամտօրէն եւ կամայական կերպով չարափոխում են Աստուածաշունչի մի շարք էական հաստատումները, իսկ յաճախ երեւակայութեամբ փորձում են սրբագրել կամ լրացնել Աստուածաշունչի մէջ գոյութիւն ունեցող «պակասները»:

Առհասարակ Աստուածաշունչին անծանօթ բարեմիտ ու պարզ հաւատացեալներին խաբում են ստից սարքուած տեսութիւններ ներկայացնելով, Աստուածաշունչի անունով: Անգիր արած համարներ իրար յետեւից, թութակաբար կրկնելով, իրար հետ յաճախ կապ չունեցող համարները արուեստականօրէն իրար կարկատելով, նախադասութեան կէսը մէջբերելով, մնացեալը չարափոխելով կամ վրայից անցնելով, ճարպկօրէն խաբում են իրենց ունկնդիրներին, որոնք իրենց հակաճառելու պատրաստութիւնն ու կարողութիւնը չունեն:

ՈՒՍՏԻ, ԵՀՈՎԱՅԻ ՎԿԱՆԵՐԻ ԱՍՏԻԱԾԱԾՈՒՆՉԻ ԱՆՈՒՆՈՎ ՔԱՐՈԶԱԾՆԵՐԸ ԱՅՆՔԱՀՆ ՀԵՌՈՒ ԵՆ ԱՍՏԻԱԾԱԾՈՒՆՉԻ ԾԾՄԱՐՏՈՒԹԻՒՆԻՑ, ՈՐՔԱՆ ԵՐԿԻՆՔԸ՝ ԵՐԿՐԻՑ:

Քրիստոնէական բոլոր Եկեղեցիները անխտիր՝ Ուղղափառ (Օրթոդոքս), Առաքելական, Կաթոլիկ ու Բողոքական, իրենց հրատարակութիւններով եւ պաշտօնական յայտարարութիւններով բազմիցս հերքել ու դատապարտել են նրանց ստապատում եւ մոլար վարդապետութիւնները եւ զգուշացրել իրենց Եկեղեցիների անդամներին հեռու մնալ այս խաբեբայ եւ վտանգաւոր *աղանդաւորներից, հերետիկոսներից*:

Ուստի, մենք եւս այսու գրով պաշտօնապէս յանձնարարում ենք մեր Եկեղեցւոյ զաւակներին. նորելուկ այս Ցուդաներին դուրս շպրտել մեր համայնքի միջից, նրանց աներես ու վարձկան քարոզիչներին չթողնել, որ մուտք գործեն մեր տներից ու դպրոցներից, մեր ազգային հաստատութիւններից ու միութիւններից ներս:

Անհրաժեշտութեան պարագային մենք շատ աւելի խիստ կը վարուենք նրանց հետ. թոյլ չենք տայ օգտուելու մեր կրօնական եւ ազգային հաստատութիւններից եւ հնարաւորութիւններից: Առայժմ մեր բարոյական պարտականութիւնն ենք համարում յստակ դիրք ճշտել նրանց նկատմամբ, լուսաբանել եւ յորդորել մեր Եկեղեցւոյ զաւակներին՝ չխաբուել նրանց սուտ ու շինծու խօսքերից ու հաւատարիմ մնալ մեր կրօնական ու ազգային սրբութիւններին, մեր քրիստոնէական մաքրամաքուր հաւատքին:

ՐԱՍԸԼԱԿԱՆՈՒԹԻՒՆ ԿԱՄ «ԵՀՈՎԱՅԻ ՎԿԱՆԵՐ»

Որպէսզի մեր ժողովրդի զաւակները իմանան, թէ այս չարիքի արմատը որտեղից է ծնունդ առել եւ շատ հաւանաբար ներկայիս տնտեսապէս եւ բարոյապէս հովանաւորւում է միջազգային Սիոնականութեան կողմից, ստորեւ համառօտ կերպով ներկայացնում ենք, թէ ո՞վ էր «Եհովայի Վկաներ» կոչուած այս թունալից աղանդի հիմնադիրը՝ Չարլզ Թէյզ Ռասըլը, որի անունով սկզբնական շրջանին ճանաչուած էր այս աղանդաւորական շարժումը՝ որպէս «Ռասըլականութիւն»:

Իրապէս անհրաժեշտ է իմանալ Քրիստոնէական Եկեղեցւոյ եւ հայութեան այս թշնամիները ու՞մ, ինչպի՞սի մի անձնաւորութեան ուզում են մեզ հետեւորդ դարձնել. այլ խօսքով՝ փորձելով խզել մեզ մեր շուրջ 2000 տարուայ քրիստոնէական արմատներից, մեր Եկեղեցւոյ հիասքանչ արարողութիւններից եւ ծէսից, մեր պատմութիւնից ու սրբազան գրականութիւնից, մեր հոգեւոր ու մշակութային ժառանգութիւնից, մեր ազգային աւանդութիւններից եւ լուսապսակ սրբերից, փորձելով խլել մեզանից մեր բիւրաւոր նահատակների արեան հեղումով մեզ փոխանցուած մեր ազգային ու կրօնական իւրայատուկ նկարագիրն ու հայկական ինքնութիւնը, այո, նրանք ուզում են մեզ հետեւորդ դարձնել մի մարդի եւ նրա մոլար վարդապետու-

թեան, որի մասին անվարան կարելի է գործածել *խաբեբայ, ստախօս, գեղծարար, շահամոլ, անբարոյական ու վտանգաւոր քաղաքական գործիչ* բառերը:

Այս մարդը՝ Չարլզ Թէյզ Բասըլը, ծնուել էր 1852 թուին Ամերիկայի Փենսիլուանիա նահանգի Փիցպըրկ քաղաքում: Ի դէպ Չարլզը ստացել է միայն դպրոցական տարրականի մակարդակի ուսում:

Իր ինքնակոչ մարգարէութիւններով յայտարարեց, որ Քրիստոսի Երկրորդ Գալուստը տեղի է ունենալու 1872 թուին, ապա փոխեց թուականը 1874-ի եւ վերջում գուշակեց, որ աշխարհի վախճանը գալու է 1914-ին: Այստեղ կարիքը չկա շեշտելու, որ իր բոլոր գուշակութիւնները սուտ դուրս եկան:

1878 թուին Փիցպըրկ քաղաքում, առանց որեւէ եպիսկոպոսից կամ հոգեւորականից ձեռնադրուած լինելու, ինքն իրեն յայտարարեց քահանայ, հովիւ (Pastor) իր հետեւորդներից կազմուած իր աղանդաւորական շարժումին, որը մինչ այդ գոյութիւն ունեցող պաշտօնական որեւէ Եկեղեցւոյ հետ առնչութիւն չունէր վարդապետականօրէն եւ կազմակերպչական տեսակէտից:

1879 թուից սկսեց հրատարակել իր «Դիտակ» (Watchtower) կոչուած պաշտօնաթերթը եւ լոյս ընծայել իր գաղափարները տարածող բազմաթիւ գրքոյկներ եւ գրքեր: Անունով հոգեւորական (անշուշտ ինքնակոչ, ստից հոգեւորական), իրականութեան մէջ վաճառական, Չարլզ Բասըլը միաժամանակ նախաձեռնել է բազմաթիւ գործեր: Որպէս ճարպիկ գործարար (*Բիզնիսման*), հիմնել է աղիւսի, քարածուխի եւ այլ գործարաններ, ընկերութիւններ: Ծահագործել է իր աղանդաւորական շարժումի բիւրջէները, ապահովելով իր անձին համար մեծ գումարներ:

Չարաշահելով իր հանգամանքը, իր հետեւորդների, այսպէս կոչուած՝ Եհովայի Վկաների կիների եւ աղջիկների հետ ունեցել է անբարոյական կեանք: Իր յարաբերութիւնները իգական սեռի իր հաւատացեալների հետ այնքա՜ն բացայայտ եւ լկտի ձեւով է շարունակել, որ իր օրինաւոր կինը, այլեւս չհանդուրժելով նրա ցուցաբերած գայթակղեցուցիչ ընթացքին, Չարլզ Բասըլի դէմ դատ է բացել 1909 թուին եւ, ապացուցելով նրա անբարոյականութիւնն ու ապօրինի կենակցութիւնները, նրանից պաշտօնապէս ապահարզան է ստացել, իսկ դատարանը Եհովայի Վկաների հիմնադիրին տուգանել է 6036 դոլար, որը այդ ժամանակ մեծ գումար էր:

1911 թուին մի այլ գայթակղութիւն եկաւ աւելանալու Չարլզ Բասըլի մեղքերի վրայ: Նա յայտարարեց (ու դժբախտաբար շատ միամիտներ հաւատալով խաբուեցին), որ իր կողմից օրհնուած «հրաշագործ ցորեն» է ծախում: Ով որ գնէր այդ ցորենից (անշուշտ նա իր հրաշագործ ցորենը սովորական գնից շատ աւելի թանկ էր ծախում) եւ օգտուէր դրանից որպէս *սերմացու*, հինգ անգամ աւելի բերք էր ստանալու:

Բնականօրէն շահամոլական նպատակներով կատարուած այս խաբեբայութիւնը եւս երեւան եկաւ: Խաբուածները Չարլզ Բասըլի դէմ դատ բացեցին, եւ նա պարտաւորուեց 100.000 ա. դ. (հարիւր հազար ամերիկեան դոլար) տուգանք վճարել:

Այս մարդը ինքն իրեն հոչակել էր որպէս Սուրբ Գրքի մասնագէտ, ամենագէտ ու բազմաթիւ աստուածաշնչական հին լեզուների տիրապետող: Իր դէմ բացուած մի այլ դատի ընթացքին դատարանում իր ստախօս ու խաբեբայ լինելը փաստուեց, երբ նա չկարողացաւ յունարէն լեզուի տառերն իսկ ճանաչել ու արտասանել, էլ ուր մնաց, որ տիրապետէր հին յունարէն լեզուին:

Հակառակ իր ամբողջ կեանքի ընթացքին ցուցաբերած անկայուն, խաբեբայ ու անբարոյական վարքագծին, այս ճարպիկ ու հմուտ ստախօսը միշտ էլ յաջողեց այս կամ այն պատճառով Բողոքական Եկեղեցուց դժգոհ անհատներին իր շուրջ հաւաքել, տնտեսապէս եւ թւականօրէն աճեցնել իր աղանդաւորական շարժմանը յարողներին:

Եհովայի Վկաների արտայայտած հակաքրիստոնէական եւ Սուրբ Գրքի որոշ հատուածների ու համարների վերաբերեալ նրանց կատարած խաբեբայութեանց եւ խախտումների մասին շատ է գրել բոլոր պաշտօնական Եկեղեցիների կողմից եւ փաստացի տեւեալներով ցոյց է տրել, որ «Բասըլականութեան» կամ Եհովայի Վկաների քարոզխօսութեան եւ գործունէութեան բուն նպատակը քայքայել ու կործանել է Քրիստոնէական Եկեղեցին, իսկ մեր ժողովրդի պարագային՝ նաեւ ապազգայնացրել ու այլասերել մեր համայնքի անդամներին, հեռացնելով նրանց Հայոց Եկեղեցուց եւ հայութեան ներկայի եւ ապագայի կրօնական եւ ազգային նպատակներից:

Հետագային իր յաջորդը՝ J. F. Rutherford-ը զարգացրեց շատ աւելի այլանդակ եւ ծայրայեղական գաղափարներ, որոնց պատճառով Եհովայի Վկաները վերջնականօրէն դուրս դրուեցին քրիստոնէական Եկեղեցոյ ընտանիքից:

20-րդ դարի ընթացքին այս աղանդաւորական շարժումը ստացաւ նաեւ քաղաքական գունաւորում՝ քարոզելով ու թելադրելով իր հետեւորդներին չհնազանդուել ո՛չ միայն իրենց պատկանած Եկեղեցիներին, այլ նաեւ պետութեանց:

Դժբախտաբար ներկայիս շատ է նրանց թիւը Հայաստանում, քանի որ ունեն ծանօթ ու անծանօթ աղբիւրներից հայթայթող հսկայական նիւթական միջոցներ: Օգտուելով հայութեան ապրած տնտեսական շատ ծանր պայմաններից, նրանք քաղցկեղի (*քանցրի*) նման տարածւում եւ ճիւղաւորւում են Հայաստանում, ինչպէս այլ աղանդաւորական շարժումները: Ղարաբաղում նրանք յաջողութիւն չունեցան, քանի որ մի քանի տարի առաջ Արցախի հոգեւոր եւ պետական ղեկավարութիւնը, զինուորական իշխանութիւնները գիտակցելով նրանց ազգավնաս գաղափարախօսութեան Արցախի ինքնապաշտպանութեան ու ազատագրական պայքարի օրերին, նրանց նկատմամբ ցուցաբերեցին ճիշտ, այսինքն խիստ կեցուածք, որի պատճառով նրանք չկարողացան արմատաւորուել Արցախի հողում:

Յետագային մենք առիթ կ'ունենանք Տեղեկատու-ի էջերից անդրադառնալու աւելի մանրամասնօրէն նաեւ նրանց մոլար վարդապետական ուսուցումներին: Այս նիւթով առաւել չափով հետաքրքրուողներին առ ի գիտութիւն յայտնենք, որ դեռեւս 1993 թւին, զգալով այս աղանդի ներկայացրած վտանգը հայ համայնքի համար, թեհրանաբնակ մտաւորական Աբրահամ Յովասափեանը մի գեղեցիկ գիրք է գրել նրանց դէմ՝ «Ովքե՞ր են Եհովայի Վկաները» անունով: Ստորեւ տալիս ենք այդ գրքից որոշ գլուխներ.

Բասըլականութեան համառօտ պատմականը.
«Եհովայի Վկաները» աղանդի մոլար վարդապետութիւնները.
Եհովայի Վկաները խեղաթիւրում են Սուրբ Գրքի խօսքերը եւ շեղում՝ մեկնութիւնը.
Եհովայի Վկաներն ուրանում են Սուրբ Երրորդութիւնը.
Եհովայի Վկաներն ուրանում են Սուրբ Հոգու Էութիւնն ու Աստուածութիւնը.
Եհովայի Վկաներն ուրանում են Յիսուս Քրիստոսի Աստուածութիւնը.
Եհովայի Վկաներն ուրանում են Յիսուս Քրիստոսի խաչելութիւնը.
Եհովայի Վկաներն ուրանում են Քրիստոսի մարմնով յարութիւնը.
Եհովայի Վկաները Յիսուսի երկրորդ Գալստեան մասին մոլար կարծիք ունեն.
Եհովայի Վկաներն ուրանում են հոգու գոյութիւնն ու անմահութիւնը.
Եհովայի Վկաները նենգափոխում են Սուրբ Գրքի խոսքերը՝ իրենց օգտին.
Եհովայի Վկաներն աղճատում են Հաղորդութեան Սուրբ Խորհուրդը.
Եհովայի Վկաները դէմ են որեւէ կրօնական կազմակերպութեան.
Չեն տօնում (Քրիստոնէական տօները),
Եհովայի Վկաներն ուրանում են Հին Կտակարանում արձանագրուած յարութեան դէպքերը եւ աղճատում՝ Նոր Կտակարանի յարութեան պատմութիւնները:

Կարծում ենք, այս խորագրերով կատարուած հաստատումները, ըստ ինքեան, բաւական են ապացուցելու, որ մենք այստեղ գործ չունենք քրիստոնէական մէկ Եկեղեցւոյ հետ, այլ գործ ունենք մի վտանգաւոր հակաքրիստոնէական աղանդաւորական շարժումի հետ, որի նպատակն է, ինչպէս ասացինք, կործանել քրիստոնէական մեր հաւատքն ու Եկեղեցին եւ ապազգայնացնել եւ այլասերել մեր ժողովուրդը:

Ուստի, կրկին կոչ ենք անում մեր Եկեղեցւոյ զաւակներին, դուրս վտարել այս խաբեբաներին մեր համայնքի միջից: